Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 101 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 879 - Ա
որոշման

«ԴԵՊԻ ՀԱՅՔ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Զարգացնել և ամրապնդել սփյուռքահայ երիտասարդների կապը հայրենիքի հետ՝ հնարավորություն տալով նրանց մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացման գործում կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ երկարատև անձնական կապեր ստեղծել հայրենիքում և բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հովնանյան հիմնադրամ – ԱՄՆ, Նյու Ջերսի |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Դեպի Հայք» հիմնադրամ, ՀՎՀՀ՝ 02574662, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հանրապետության 37 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 481,670,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հիմնադրամը կարող է ունենալ հնարավոր և փաստացի շահառուներ: Հիմնադրամի շահառուներն են համարվում Հայաստանի Հանրապետության, արտասահմանյան երկրների ֆիզիկական և իրավաբանական |

| | | |
|---|---|---|
| | | անձինք, որոնց օգտին կարող են կատարվել որոշակի վճարումներ կամ մատուցվեն ծառայություններ, Հայաստանի և սփյուռքահայ երիտասարդները, կրթական, հասարակական և բարեգործական կազմակերպությունները, հասարակության սոցիալապես անապահով, կարիքավոր և խոցելի խմբերը, ընտանիքներն ու անձինք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի փետրվարի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հիմնադրամը կազմակերպում է 21-32 տարեկան սփյուռքահայ երիտասարդների այցեր Հայաստան՝ կամավորական աշխատանքի և այդ միջոցով Հայաստանի տարբեր ոլորտների զարգացման նպատակով: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր կամավոր աշխատում է Հայաստանում գործող տարբեր կրթական, հասարակական և բարեգործական կազմակերպություններում, որի շահառուների թվում են սոցիալապես անապահով անձինք և երեխաներ: Կամավորները ապրում են Հայաստանում երկու ամսից մինչև մեկ տարի: Բացի շաբաթը 30 /երեսուն/ ժամ կամավորական աշխատանքից՝ երեկոյան ժամերին «Դեպի Հայք» հիմնադրամը կազմակերպում է հայերեն լեզվի դասընթացներ և սեմինարներ նրանց կամավորությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Կամավորները օթևանում են մեր հյուրընկալ ընտանիքների ցանցում: Տարեկան կտրվածքով «Դեպի Հայք» հիմնադրամի ծրագրով Հայաստան են այցելում մոտ 200 կամավոր, որոնցից շուրջ 130-ը օթևանում են հյուրընկալ ընտանիքների մեր ցանցում: Կամավորները միջինում մնում են երեքից-չորս ամիս:<br><br>2024 թ. նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>1) ապրելավարձ, ճանապարհածախս, կացության վճար «Դեպի Հայք» հիմնադրամի շահառուներին՝ 88,000,000 դրամ.<br>2) տրանսպորտային միջոցների օգտագործում, էքսկուրսիաների կազմակերպում՝ 39,000,000 դրամ.<br>3) շապիկների, պայուսակների և ջեմպերների տրամադրում կամավորներին՝ 4,000,000 դրամ. |

| | | |
|---|---|---|
| | | 4) այցելություն պատմամշակութային վայրեր, ծանոթացում հայկական խոհանոցին, արվեստին և պատմությանը՝ 5,000,000 դրամ.<br>5) հայոց լեզվի դասընթացներ, սեմինարներ, դասագրքեր, տպագրություն AYOlingo հայերենի ուսուցման բջջային հավելվածի, թարմացում, ընդլայնում, նաև նշված հավելվածի ամսական տեխնիկական սպասարկում և այլ ուսուցողական ծառայություններ՝ 40,600,000 դրամ:<br>6) աջակցություն կրթական օջախների նորոգմանը՝ 15,000,000 դրամ.<br>7) կոմունալ ծախսեր՝ 3,900,000 դրամ.<br>8) հաշվապահական հաշվառում և իրավաբանական խորհրդատվություն՝ 11,000,000 դրամ.<br>9) վեբ կայքի սպասարկում, սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովում, համատեղակայում, դատա պրո, տեսահոլովակների և գովազդային նյութերի պատրաստում՝ 15,800,000 դրամ.<br>10) գրենական, տնտեսական ապրանքներ՝ 2,000,000 դրամ.<br>11) ուղևորափոխադրման ծախսեր՝ 3,600,000 դրամ.<br>12) գրասենյակային ծախսեր՝ 11,360,000 դրամ:<br><br>2025 թ. նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>1) ապրելավարձ, ճանապարհածախս, կացության վճար «Դեպի Հայք» հիմնադրամի շահառուներին՝ 88,000,000 դրամ.<br>2) տրանսպորտային միջոցների օգտագործում, էքսկուրսիաների կազմակերպում՝ 39,000,000 դրամ.<br>3) շապիկների, պայուսակների և ջեմպերների տրամադրում կամավորներին՝ 4,000,000 դրամ.<br>4) այցելություն պատմամշակութային վայրեր, ծանոթացում հայկական խոհանոցին, արվեստին և պատմությանը՝ 5,000,000 դրամ. |

| | | |
|---|---|---|
| | | 5) հայոց լեզվի դասընթացներ, սեմինարներ, դասագրքեր, տպագրություն AYOlingo հայերենի ուսուցման բջջային հավելվածի, թարմացում, ընդլայնում, նաև նշված հավելվածի ամսական տեխնիկական սպասարկում և այլ ուսուցողական ծառայություններ՝ 40,600,000 դրամ.<br>6) աջակցություն կրթական օջախների նորոգմանը՝ 18,000,000 դրամ.<br>7) կոմունալ ծախսեր՝ 3,900,000 դրամ.<br>8) հաշվապահական հաշվառում և իրավաբանական խորհրդատվություն՝ 11,000,000 դրամ.<br>9) վեբ կայքի սպասարկում, սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովում, համատեղակայում, դատա պրո, տեսահոլովակների և գովազդային նյութերի պատրաստում՝ 15,800,000 դրամ.<br>10) գրենական, տնտեսական ապրանքներ՝ 2,000,000 դրամ.<br>11) ուղևորափոխադրման ծախսեր՝ 3,600,000 դրամ.<br>12) գրասենյակային ծախսեր և օբյեկտի անվտանգության պահպանման ծախսեր՝ 9,860,000 դրամ.<br>13) աուդիտորական ծառայություն՝ 1,500,000 դրամ:<br><br>2026 թ. նախատեսվում են հետևյալ ծախսերը՝<br>1) կոմունալ ծախսեր՝ 150,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) տրանսպորտային միջոցների օգտագործում, էքսկուրսիաների իրականացում՝ 78,000,000 դրամ.<br>2) շապիկների, պայուսակների և ջեմպերների ձեռքբերում՝ 8,000,000 դրամ.<br>3) այցելություն պատմամշակութային վայրեր, ծանոթացում հայկական խոհանոցին, արվեստին և պատմությանը՝ 10,000,000 դրամ. |

| | | |
|---|---|---|
| | | 4) հայոց լեզվի դասընթացներ, սեմինարներ, դասագրքեր, տպագրություն, AYOlingo հայերենի ուսուցման բջջային հավելվածի թարմացում, ընդլայնում, նաև նշված հավելվածի ամսական տեխնիկական սպասարկում և այլ ուսուցողական ծառայությունների ձեռքբերում՝ 81,200,000 դրամ:<br>5) աջակցություն կրթական օջախների նորոգմանը, շինարարական նյութերի ձեռքբերում՝ 33,000,000 դրամ.<br>6) կոմունալ ծախսեր՝ 7,950,000 դրամ.<br>7) ֆինանսական հաշվառման և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների ձեռքբերում՝ 22,000,000 դրամ.<br>8) վեբ կայքի սպասարկում, սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովում, համատեղակայում, դատա պրո, տեսահոլովակների և գովազդային նյութերի պատրաստման ծառայությունների ձեռքբերում՝ 31,600,000 դրամ.<br>9) գրասենյակային, գրենական և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 4,000,000 դրամ.<br>10) ուղևորափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 7,200,000 դրամ.<br>11) գրասենյակային ծախսեր և օբյեկտի անվտանգության պահպանման ծախսեր՝ 21,220,000 դրամ.<br>12) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,500,000 դրամ. |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 1) կոմունալ ծախսեր՝ 7,950,000 դրամ.<br>2) ֆինանսական հաշվառման ծառայությունների և իրավաբանական խորհրդատվության մատուցում՝ 22,000,000 դրամ.<br>3) վեբ կայքի սպասարկում, սերվերային, համակարգչային և ցանցային համակարգերի, ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովում, համատեղակայում, դատա պրո, տեսահոլովակների և գովազդային նյութերի պատրաստում՝ 31,600,000 դրամ. |

| | | |
|---|---|---|
| | | 4) գրենական և տնտեսական ապրանքներ՝ 4,000,000 դրամ.<br>5) ուղևորափոխադրման ծախսեր՝ 7,200,000 դրամ.<br>6) գրասենյակային ծախսեր և օբյեկտի անվտանգության պահպանման ծախսեր՝ 21,220,000 դրամ.<br>7) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,500,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | 1) «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ<br>2) «Հայկական նախագիծ» հետազոտական ինստիտուտ<br>3) «ԱՐԴԱ» մարդասիրական հիմնադրամ<br>4) «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ<br>5) Հայկական Կարիտաս. Գյումրի<br>6) Հայկական Կարիտաս. Վանաձոր<br>7) Նորարար փորձառական արվեստի կենտրոն ՆՓԱԿ<br>8) «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ<br>9) «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ<br>10) Հայկական կարմիր խաչի ընկերություն<br>11) «Բալետ 2021» զարգացման հիմնադրամ<br>12) «Բու» լեռնահեծանվային պարկ տուրիզմի զարգացման ՀԿ<br>13) «Կենտավր» հիպոթերապիայի և ձիասպորտի ասոցիացիա<br>14) «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ<br>15) «Դեպի առաջ» երեխաների կենտրոն<br>16) ՀՕՖ երեխաների աջակցման կենտրոն<br>17) «Ի-Վի-Էն» ռիփորթ<br>18) «Բոլորը Հայաստանի համար» բարեգործական հիմնադրամ<br>19) «Քեզ համար» ՀԿ<br>20) «Լիարժեք կյանք» ՀԿ<br>21) Հայ աղջիկների առաջնորդությունը ֆուտբոլում ՀԿ<br>22) Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ<br>23) «Թափանցիկ բարեգործություն» հիմնադրամ |

| | | |
|---|---|---|
| | | 24) «Գրքասեր» հասարակական կազմակերպություն<br>25) Երեխայի զարգացման միջազգային կենտրոն<br>26) «Էսպաս» երիտասարդական կրթամշակութային կենտրոն<br>27) «ԼոգոՍ» իրավապաշտպան ՀԿ<br>28) Լոռու զարգացման կենտրոն ՀԿ<br>29) «Նարեկ» մշակութային հիմնադրամ<br>30) Օղակ ՀԿ<br>31) «Օրրան» բարեգործական ՀԿ<br>32) «Փոուզիթիվ» կենդանիների պաշտպանության կազմակերպություն<br>33) «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ՀԿ<br>34) «Հաբիթաթ» - գյուղական համայնքների զարգացման ՀԿ<br>35) Շիրվանյան Երիտասարդական Կենտրոն<br>36) «Սպիտակի Հելսինկյան Խումբ» իրավապաշտպան ՀԿ<br>37) Նոր Արար կրթական ՀԿ<br>38) Վիկիմեդիա Հայաստան ՀԿ<br>39) «Ունիսոն» ՀԿ<br>40) «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ<br>41) «Վորլդ վիժն հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպություն<br>42) «Փյունիկ» Հայաստանի հաշմանդամների միություն» բարեգործական ՀԿ<br>43) Երևանի ամերիկյան կենտրոն<br>44) Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն<br>45) Հայ-առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդարանի Երիտասարդական կենտրոն<br>46) «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ<br>47) Կայուն էներգիայի զարգացման հիմնադրամ<br>48) Իրական աշխարհ իրական մարդիկ ՀԿ |

| | | |
|---|---|---|
| | | 49) Վանաձորի քաղաքացիական երիտասարդական կենտրոն<br>50) WWF Հայաստանյան մասնաճյուղ<br>51) «Սաստիկ» հիմնադրամ<br>52) Ճանապարհորդող բժիշկներ<br>53) Երիտասարդների հզորացում և կայունություն (YES) |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ամսական զեկուցում և հաշվետվություններ Հովնանյան հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին: |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ